ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

31 օգոստոսի 1998թվականի №41
ք.Երևան

ՀՀ էներգետիկայի բնագավառի էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության և բաշխման լիցենզիաների մասին

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36 հոդվածով, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի ձևը և լիցենզիայով սահմանվող՝ գործունեություն իրականացնելու հիմնական պայմանները (հավելված 1) :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիայի ձևը և լիցենզիայով սահմանվող՝ գործունեություն իրականացնելու հիմնական պայմանները (հավելված 2) :
3. Սահմանել, որ լիցենզավորման ընթացքում, տնտեսավարող սուբյեկտների կողմից հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա, հանձնաժողովը կարող է տվյալ լիցենզիայի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահ՝ **Վ.Մովսեսյան**